ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵԱՏՄ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2025.4-71

Հիմնաբառեր. *ԵԱՏՄ, Ռուսաստանի Դաշնություն, արտահանման ներուժ, տնտեսական ինտեգրացիա, հնարավորություններ, մարտահրավերներ*

Եվրասիական տնտեսական միությունը հանդես է գալիս որպես ինտեգրացիոն հարթակ, որը հնարավորություն է տալիս անդամ պետություններին ընդլայնելու իրենց արտահանման շուկաները և ապահովելու տնտեսական աճի կայուն նախադրյալներ: ԵԱՏՄ առանցքային դերակատարը Ռուսաստանի Դաշնությունն է՝ թե՛ իր տնտեսության ծավալներով, թե՛ միասնական շուկայի ձևավորման գործում ունեցած ազդեցությամբ: Հոդվածի նպատակն է վերլուծել Ռուսաստանի արտահանման ներուժը ԵԱՏՄ շրջանակներում՝ առանձնացնելով ինչպես կառուցվածքային առավելությունները, այնպես էլ սահմանափակող գործոնները: Հետազոտության հիմքում համեմատական և վիճակագրական մեթոդաբանություն է՝ ներառելով վերջին տարիների պաշտոնական տվյալները և մասնագիտական գրականությունը:



Արմիդա ՔԵՌՅԱՆ

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի երկրորդ կուրսի մագիստրանտ, տնտեսագիտական ֆակուլտետ, ՀՊՏՀ

https://orcid.org/0009-0008-6476-6853

Արտահանումը յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման առանցքային բաղադրիչներից է: Ռուսաստանի Դաշնության համար, հատկապես վերջին տարիներին ակնհայտ են արտահանման կառուցվածքի և աշխարհագրության փոփոխությունները, երբ համաշխարհային քաղաքական իրադարձությունները և արևմտյան պատժամիջոցները դրդել են վերանայելու արտաքին տնտեսական առաջնահերթությունները: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի Եվրասիական տնտեսական միությունը, որը ոչ միայն մաքսային միություն է, այլև կարևոր ինտեգրացիոն հարթակ, որի նպատակն է խթանել միության անդամ երկրների միջև տնտեսական համագործակցությունը և ապրանքաշրջանառությունը:

Ներկայումս Ռուսաստանի արտահանման քաղաքականության մեջ ԵԱՏՄ շուկան դիտվում է որպես առանց-

քային ուղղություն՝ առաջարկելով և՛ նոր հնարավորություններ, և՛ մարտահրավերներ՝ պայմանավորված թե՛ ներքին տնտեսական գործոններով, թե՛ աշխարհաքաղաքական իրավիճակով: ԵԱՏՄ շրջանակներում ՌԴ-ն հանդես է գալիս ոչ միայն որպես ամենամեծ տնտեսություն ունեցող երկիր, այլև իբրև ԵԱՏՄ-ում հիմնական տնտեսական հավասարակշռության ապահովող: Այդ իսկ պատճառով Ռուսաստանի արտահանման քաղաքականության ուսումնասիրությունը ԵԱՏՄ համատեքստում կարևոր է՝ ինչպես առանձին երկրների միջև փոխադարձ տնտեսական կապերի խորությունը հասկանալու, այնպես էլ ամբողջ միության տնտեսական զարգացման հեռանկարները գնահատելու առումով: Հոդվածում վերլուծելով ՌԴ արտահանման ներուժը ԵԱՏՄ շուկաներում՝ փորձ է արվում բացահայտելու այն գործոնները, որոնք խթանում են տնտեսական ինտեգրացիան, ինչպես նաև առանձնացնելու այն գործոնները, որոնք սահմանափակում են առկա հնարավորությունների լիարժեք իրացումը: Հետազոտության խնդիրն է գտնել հետևյալ հարցերի պատասխանը. արդյո՞ք Ռուսաստանի արտահանման կառուցվածքը համապատասխանում է ԵԱՏՄ տնտեսական ինտեգրման ռազմավարական նպատակներին, և ի՞նչ քայլեր պետք է կատարել արտաքին առևտրի արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵԱՏՄ շուկան Ռուսաստանի արտահանողների համար առանձնանում է մի շարք առավելություններով՝ միասնականությամբ և մաքսային սահմանների բացակայությամբ, որոնք նվազեցնում են վարչական ծախսերը: Միաժամանակ, միասնական տեխնիկական կանոնակարգերի շնորհիվ, պարզեցված են որակի վերահսկողության և ապրանքների սերտիֆիկացման գործընթացները, ինչպես նաև զարգացած տրանսպորտային և լոգիստիկ կապերը: Վերջինս մեծ նշանակություն ունի Ռուսաստանի համար՝ հաշվի առնելով արևմտյան երթուղիների սահմանափակումները: Այս առանձնահատկություններից ելնելով՝ կարող ենք ասել, որ ԵԱՏՄ շուկան Ռուսաստանի համար ոչ միայն արտահանման հիմնական ուղղություն է, այլև տնտեսական հավասարակշռության պահպանման կարևոր միջոց՝ համաշխարհային մարտահրավերների և միջազգային քաղաքական անորոշությունների պայմաններում:

Արտահանումը, ավանդաբար, գերակշռող դեր ունի Ռուսաստանի արտաքին առևտրի կառուցվածքում: Երկրի արտահանումը վերջին տասնամյակների ընթացքում հիմնականում ձևավորվել է ըստ հումքային և էներգակիրների վրա հիմնված մոդելի, որն էլ Ռուսաստանը դարձրել է կարևոր մատակարար համաշխարհային շուկայում: Սակայն, աշխարհաքաղաքական զարգացումները զգալիորեն փոխել են ապրանքային կառուցվածքը և արտահանման քաղաքականությունը՝ հատկապես 2022 թվականից հետո: Արևմտյան երկրների պատժամիջոցների ազդեցությամբ, սկսած 2022 թվականից, Ռուսաստանը կանգնել է նոր մարտահրավերների առջև: Եվրոպական շուկաների սահմանափակումները Ռուսաստանին ստիպել են վերանայել իր արտահանումը դեպի այլ տարածաշրջաններ: Այս ամենը ուղեկցվում է արտահանման կառուցվածքային փոփոխություններով՝ փոքրինչ նվազեցնելով ավանդական էներգակիրների մասնաբաժինը, միաժամանակ, որոշակի աճ գրանցելով գյուղատնտեսական, մետաղագործական և քիմիական արտադրանքի մասնաբաժնում: Այս միտումներից ելնելով՝ կարող ենք նշել, որ Ռուսաստանը փորձ է անում աստիճանաբար բազմազանեցնելու իր արտահանման կախվածությունը նավթի և գազի նկատմամբ: Ըստ վիճակագրական տվյալների՝ Ռուսաստանը վերահսկում է համաշխարհային նավթի ապացուցված պաշարների մոտ 6-7%-ը, իսկ նավթի արտահանման ոլորտում նրա մասնաբաժինը համաշխարհային շուկայում մոտ 5% է, ինչը վկայում է, որ, չնայած արտահանման կառուցվածքի աստիճանական դիվերսիֆիկացման փորձերին, էներգակիրները դեռևս պահպանում են իրենց նշանակությունը[1]: Իրավիճակը համեմատաբար ավե-

[1] Energy Institute. (2024). Statistical Review of World Energy 2024. KPMG & Energy Institute. https://assets.kpmg.com/content/dam/kpmg/az/pdf/2024/Statistical-Review-of-World-Energy.pdf

լի ընդգրկուն է բնական գազի ոլորտում. Ռուսաստանը վերահսկում է համաշխարհային բնական գազի ապացուցված պաշարների շուրջ 24%-ը, իսկ արտահանման մասնաբաժինը մոտ 20% է, ինչն էլ նրան դիրքավորում է հիմնական մատակարարի կարգավիճակում[2]:

Ռուս-ուկրաինական պատերազմի և արևմտյան պատժամիջոցների հետևանքով ՌԴ արտահանումը լուրջ փորձության առաջ կանգնեց: Արևմտյան տեխնոլոգիաների սահմանափակումը, եվրոպական շուկայի կորուստը և միջազգային ֆինանսական համակարգում գործելու դժվարությունները ստիպեցին Ռուսաստանին վերակողմնորոշվել դեպի այլ ուղղություններ: Այս համատեքստում ԵԱՏՄ շուկան նոր ռազմավարական նշանակություն ստացավ: ԵԱՏՄ ներսում շուկայի ընդլայնման արդյունքում Ռուսաստանի համար բացվել են տնտեսական մեծ հնարավորություններ՝ պայմանավորված ԵԱՏՄ անդամ երկրների հետ ապրանքաշրջանառության ընդլայնմամբ: Հիմնականում մեծացել է արդյունաբերական և գյուղա տնտեսական ապրանքների արտահանման ներուժը: Ռուսաստանի համար ներմուծման փոխարինման քաղաքականությունն ունի մեծ նշանակություն, և ԵԱՏՄ շրջանակներում հնարավոր է զարգացնել համատեղ արտադրություններ դեղագործության, էլեկտրոնիկայի և մեքենաշինության ոլորտներում: Առկա է նաև տեխնոլոգիական համագործակցության հնարավորություն. արևմտյան սահմանափակումները մեծապես խթանում են Ռուսաստանի և ԵԱՏՄ գործընկերների միջև համատեղ արտադրությունների և փոխարինող տեխնոլոգիաների ստեղծումը: Հաջորդը տրանսպորտային միջանցքների զարգացման հնարավորությունն է. ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով սառեցված եվրոպական երթուղիների փոխարեն՝ Ռուսաստանը սկսեց զարգացնել «Հյուսիս-Հարավ» և այլ լոգիստիկ միջանցքներ, որոնք ԵԱՏՄ երկրների տարածքով են անցնում:

Թեև առկա հնարավորություններին, միաժամանակ, կան նաև մի շարք մարտահրավերներ: Դրանցից են՝ տնտեսական կախվածություն ԵԱՏՄ-ից, ԵՄ և Ասիայի խոշոր շուկաների համեմատ՝ ԵԱՏՄ շուկայի սահմանափակ չափեր: 2024 թ. տվյալներով՝ ԵԱՏՄ երկրների համախառն արտահանման ծավալը կազմել է մոտ 494,6 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը համաշխարհային ապրանքարտահանման մոտ 2,07%-ն է[3]: Համեմատության համար նշենք, որ Հարավարևելյան Ասիայի ազգերի ասոցիացիայի (ԱՍԵԱՆ) արտահանման ծավալը նույն տարում գերազանցել է 2 տրիլիոն դոլարը, իսկ ԵՄ-ն պահպանել է իր առաջատար դիրքը՝ զբաղեցնելով շուրջ 31% մասնաբաժին[4]: Առկա են մի շարք լոգիստիկ դժվարություններ. նոր միջանցքների ստեղծման հնարավորության հետ մեկտեղ, մեծացել են տրանսպորտային ծախսերը, ինչի հետևանքով էլ նվազել է արտահանման մրցունակությունը: 2022 թ. հետո՝ եվրոպական տրանսպորտային ուղղությունների մասնակի դադարեցման և բեռնափոխադրումների աշխարհագրության վերակազմավորման արդյունքում, միջին ծովային փոխադրումների արժեքը ռուսական նավահանգիստներից դեպի Ասիա աճել է մոտ 35%-ով, իսկ դեպի Մերձավոր Արևելք՝ շուրջ 28%-ով՝ 2021-ի համեմատ[5]: Սա պայմանավորված է ինչպես մատակարարման շղթաների երկարացմամբ, այնպես էլ ապահովագրական վճարների և բեռնափոխադրող ընկերությունների սահմանափակ հասանելիությամբ: Կան նաև տեխնոլոգիական և ֆինանսական սահմանափակումներ. պատժամիջոցների հետևանքով առաջանում են խոչընդոտներ միջազգային վճարային համակարգերի հասանելիության և արդիական տեխնոլոգիաների ներմուծման հարցում: Արևմտյան բարձր տեխնոլոգիական սարքավորումների և բաղադրիչ-

[2] Energy Institute. (2024). Statistical Review of World Energy 2024. KPMG & Energy Institute. https://assets.kpmg.com/content/dam/kpmg/az/pdf/2024/Statistical-Review-of-World-Energy.pdf

[3] The place of the EAEU in world trade in 2024, "1520 International", according to ITC data: https://1520international.com/en/content/2025/iyun-2025/bolshoe-evraziyskoe-partnerstvo-teoriya-i-praktika-chast-tretya/

[4] Նույն աղբյուրը:

[5] Drewry Shipping Consultants (2023). Global Container Freight Rate Index – Russia–Asia Corridor. https://www.drewry.co.uk/maritime-research

ների մատակարարումները կրճատվել են ավելի քան 45%-ով՝ 2022-2024 թթ. ընթացքում, հատկապես էլեկտրոնիկայի, ավտոմոբիլային և ավիացիոն արդյունաբերության ոլորտներում[6]: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) տվյալների՝ Ռուսաստանի տեխնոլոգիական արտահանման ծավալը 2023 թ. կազմել է 2021 թ. ցուցանիշի ընդամենը 38%-ը, իսկ մեքենաշինական ներդրումների ներհոսքը նվազել է մոտ 60%-ով[7]:

Այսպիսով՝ ռուս-ուկրաինական պատերազմը մի կողմից սահմանափակել է Ռուսաստանի արտահանման ավանդական ուղիները, իսկ մյուս կողմից՝ նոր հնարավորություններ ստեղծել ԵԱՏՄ շրջանակներում խորացնելու տնտեսական կապերը: Եթե մինչև պատերազմը Ռուսաստանի ընդհանուր արտահանման մոտ 46%-ն էր ուղղված ԵՄ երկրներ, ապա 2023 թ. այդ ցուցանիշը նվազել է մինչև մոտ 25%, ինչն էլ արտացոլում է եվրոպական շուկաների մասշտաբային փակումը և պատժամիջոցների ազդեցությունը[8]: Այս պայմաններում Ռուսաստանը սկսեց իր արտահանման հոսքերը վերաուղղել դեպի ԵԱՏՄ անդամ երկրների շուկաներ: Ըստ ԵԱՏՄ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022-2023 թթ. Ռուսաստանի ապրանքաշրջանառությունը ԵԱՏՄ երկրների հետ աճել է ավելի քան 12%-ով, իսկ մասնավորապես՝ Հայաստանի, Բելառուսի և Ղազախստանի մասնաբաժինները ռուսական արտահանման կառուցվածքում ավելացել են շուրջ 2-3 տոկոսային կետով[9]: Սակայն, վերոնշյալ հնարավորությունների իրագործումը ենթադրում է համալիր մոտեցում, որը կներառի ինչպես արտադրության բազմազանեցումը, այնպես էլ լոգիստիկայի բարելավումը:

Մինչև 2014 թվականը՝ Ռուսաստանի արտահանման հիմնական ուղղությունը Եվրոպական միությունն էր, բայց վերջին տասնամյակում զգալիորեն թուլացել է այդ դիրքը: Ռուսաստանը պատժամիջոցների հետևանքով ավելի շատ կենտրոնացել է Մերձավոր Արևելքի և Ասիայի շուկաների վրա: Մասնավորապես՝ Չինաստանը դարձել է Ռուսաստանի առևտրային հիմնական գործընկերը. 2024 թ. Չինաստանի հետ երկկողմ առևտրի ծավալը կազմել է 244,8 մլրդ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 1,96%-ով: Չինաստանը դարձել է նաև Ռուսաստանի նավթային արտահանման հիմնական ուղղությունը՝ 2024 թ.ռուսական նավթի կեսը արտահանվել է Չինաստան[10]: Միաժամանակ, Թուրքիան, Հնդկաստանը և մի շարք այլ երկրներ մեծացրել են ռուսական ապրանքների ներմուծումը: Թուրքիայի հետ առևտրի ծավալը 2024 թ. կազմել է 52,6 մլրդ դոլար, չնայած ԵՄ-ի հետ առևտրի կրճատմանը՝ Թուրքիան դարձել է Ռուսաստանի երկրորդ խոշորագույն առևտրային գործընկերը[11]: Հնդկաստանի հետ առևտրի ծավալը 2024 թ. հասել է 66 մլրդ դոլարի, ինչը 9%-ով ավելացել է նախորդ տարվա համեմատ: Հնդկաստանը դարձել է Ռուսաստանի նավթի խոշորագույն գնորդը՝ 2024 թ. ներմուծելով դրա 35-40%-ը[12]:

Այս ամենը փոփոխում է Ռուսաստանի տնտեսական զարգացման ռազմավարական ուղղությունները: Նման միտումը վկայում է, որ Ռուսաստանի արտահանման ռազմավարությունը Եվրոպական միությունից աստիճանաբար տեղափոխվում է դեպի Արևելք: ԵԱՏՄ անդամ երկրները ռազմավարական նշանակություն ունեն Ռուսաստանի արտահանման համար: Անդամ երկրները ոչ միայն կա-

[6] European Commission (2024). EU Sanctions and Export Controls Dashboard: Russia 2022–2024. https://policy.trade.ec.europa.eu/index_en

[7] OECD (2024). Economic Outlook: Russia's Technology and Industrial Sector Review. https://www.oecd.org/en/topics/economy.html

[8] Eurostat. EU Trade in Goods with Russia, 2021–2023. Brussels: European Commission. https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=EU_trade_with_Russia_-_latest_developments

[9] Eurasian Economic Commission. Mutual Trade in Goods between EAEU Member States, 2024, https://eec.eaeunion.org/upload/iblock/7f4/Eurasian-Economic-Integration.pdf

[10] Reuters. (2025, January 13). China-Russia trade https://tass.com/economy/1898227

[11] Anadolu Agency. (2025, September 9). Turkey has become Russia's second-largest trading partner, https://turkishminute.com/2025/09/09/turkey-has-become-russias-second-largest-trading-partner-minister-says/

[12] Economic Times. (2024, November 27): India-Russia trade https://m.economictimes.com/news/economy/foreign-trade/india-russia-trade-hits-usd-66bn-in-2024-target-of-usd-100bn-by-2030-on-track-russian-envoy/articleshow/115734758.cms



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՌԴ արտահանումը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ, 2015-2024 թթ. (մլրդ ԱՄՆ դոլար)[13]

րևոր շուկաներ են վերջինիս առումով, այլև ապահովում են տնտեսական և քաղաքական ինտեգրացիոն կապեր: 2015-2024 թթ. Ռուսաստանի Դաշնության արտահանումը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ ձևավորվել է քաղաքական, շուկայական և տնտեսական մի շարք գործոնների ազդեցության ներքո: Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման ընդհանուր ծավալն ընդհանուր առմամբ ունեցել է աճման միտում (տե՛ս գծապատկեր 1): ՌԴ-ից ԵԱՏՄ անդամ երկրներ ընդհանուր արտահանումը կազմել է մոտ 24,53 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2024 թ.՝ մոտ 60,36 մլրդ ԱՄՆ դոլար: Հետևաբար՝ մեկ տասնամյակի ընթացքում գրանցվել է 2,4 անգամ աճ: ԵԱՏՄ անդամ տարբեր երկրներում արտահանումն ունեցել է տարբեր զարգացումներ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման հիմնական բաժինը պատկանում է Բելառուսին՝ դիտարկվող ժամանակահատվածում ունենալով մոտ 2,5 անգամ աճ: Ճիշտ է 2020 և 2024 թվականներին արտահանման ծավալներում գրանցվել է փոքր-ինչ անկում, միևնույն է, Բելառուսը մնում է Ռուսաստանի հիմնական գործընկերը ԵԱՏՄ շրջանակներում:

Արտահանման ծավալներում Ղազախստանը զբաղեցնում է երկրորդ տեղը: Չնայած այս ամենին, վերջին տարիների ընթացքում նկատվել է որոշակի անկում՝ 18,72 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 16,91 մլրդ ԱՄՆ դոլարի: Այսպիսի միտումը կարող է կապված լինել ինչպես տարածաշրջանային շուկաների տատանումների, այնպես էլ Ղազախստանի տնտեսական քաղաքականության վերանայումների հետ:

Հայաստանը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է արտահանման ծավալների նկատելի աճ: Եթե 2015 թ. արտահանման ծավալն ընդամենը մոտ 510 մլն ԱՄՆ դոլար էր, ապա 2024 թ. դա հասել է 9,26 մլրդ ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ Հայաստանը գրեթե քսանապատկել է Ռուսաստանից ներմուծումները: Սա խոսում է առևտրատնտեսական հարաբերությունների ինտենսիվացման և ռուսական ապրանքների նկատմամբ պահանջարկի զգալի աճի մասին:

ՌԴ-ի համար համեմատաբար փոքր գործընկեր է եղել Ղրղզստանը, սակայն նրա ներմուծման ծավալները ևս ունեցել են աճի միտում: Ճիշտ է, դիտարկվող ժամանակահատվածում արտահանման ծավալն աճել է մոտ 1,8 անգամ, այնուամենայնիվ, դա վկայում է ինտեգրացիոն դրական գործընթացների մասին:

Դիտարկելով 2015-2024 թթ. Ռուսաստանի արտահանման տարեկան աճի

[13] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալները, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՌԴ արտահանման տարեկան աճի տեմպերը ԵԱՏՄ շրջանակներում, 2015-2024 թթ. (%)[14]

տեմպերը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ՝ նկատվում են զգալի տատանումներ (տես գծապատկեր 2): Հաշվարկված աճի տեմպերը վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում արտահանման շարժընթացը եղել է ոչ համաչափ՝ որոշ տարիներին գրանցվել է կտրուկ աճ, իսկ մյուս տարիներին՝ անկում: 2016 թ. նախորդ տարվա համեմատ ընդհանուր արտահանման ծավալն ավելացել է մոտ 13,2%-ով: Այս միտումը հիմնականում պայմանավորված է 2014-2015 թթ. արժութային և տնտեսական ճգնաժամից հետո ռուսական տնտեսության համեմատաբար արագ վերականգնմամբ: Այնուհետև՝ մինչև 2019 թվականը, ևս նկատվել է աճի միտում, սակայն 2020 թ. համավարակի պայմաններում արտահանման ծավալները կտրուկ կերպով նվազել են շուրջ -15,54%-ով: Այս ամենը տրամաբանական է, քանի որ համաշխարհային շուկաներում կրճատվեց ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրներում անկում ապրեց տնտեսական ակտիվությունը: Այնուհետև հաջորդեց վերականգնման շրջանը, որը կապված էր համավարակից հետո տնտեսական ակտիվության վերականգնման և հումքային գների բարձրացման հետ: Դիտարկվող հաջորդող տարիներին նկատվում է աճի տեմպերի դանդաղում, և 2024 թ. ընդհանուր արտահանման աճի տեմպը կազմել է մոտ 8,2%, ինչը ցույց է տալիս կայուն դրական միտում:

Այսպիսով՝ Ռուսաստանի արտահանումը ԵԱՏՄ անդամ երկրներ ենթարկվել է արտաքին և ներքին գործոնների ազդեցության՝ երկարաժամկետ հեռանկարում պահպանելով աճի միտումը: Սա վկայում է ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների կարևորությունը Ռուսաստանի համար:

Միջազգային առևտրի վերլուծության կարևորագույն ուղղություններից մեկն արտահանման կառուցվածքի ուսումնասիրությունն է, քանի որ դա հնարավորություն է տալիս գնահատելու ինչպես երկրի ներկայիս մասնագիտացումը համաշխարհային տնտեսության մեջ, այնպես էլ բացահայտելու այն ոլորտները, որոնք կարող են հիմք ծառայել ապագա զարգացման համար:

Հաջորդիվ իրականացվել է խաչաձև համեմատական վերլուծություն՝ ՌԴ արտահանումը դեպի համաշխարհային շուկա և դեպի ԵԱՏՄ՝ 2024 թ. տվյալներով: Համաշխարհային մակարդակով տվյալների վերլուծությունը ցույց է տալիս ՌԴ արտահանման գլոբալ կառուցվածքը, իսկ ԵԱՏՄ առումով՝ տարածաշրջանային շուկայի առանձնահատկությունները: Վերլուծության ընթացքում կիրառվել է ապրանքների խմբավորում՝ «Միջազգային առևտ-

[14] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալները, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

րի ստանդարտ դասակարգման» եռանիշ (SITC -3) դասակարգչի հիման վրա, որը միաժամանակ, հնարավորություն է տալիս ներկայացնելու տվյալների համադրություն տարբեր երկրներում և բացահայտելու տնտեսական միտումները: Ուսումնասիրության համար ընտրվել են այն ապրանքախմբերը, որոնք ՌԴ արտահանման կառուցվածքում ունեն գերակշիռ մաս և նշանակալի ազդեցություն և՛ երկրի արտաքին առևտրի, և՛ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական համագործակցության վրա: Ռուսաստանի արտահանման մեջ աշխարհի մասշտաբով հում նավթի մասնաբաժինը կազմում է շուրջ 43,4%[15] (տես գծապատկեր 3), միաժամանակ, ԵԱՏՄ երկրների համար այս ցուցանիշը մի փոքր ավելի բարձր է՝ մոտ 45,3%[16] (տես գծապատկեր 4): Սա վկայում է, որ ԵԱՏՄ անդամ երկրները շարունակում են կախված մնալ ռուսական հումքային մատակարարումներից: Հում նավթի գերակշռությունը վկայում է մատակարարման կայունության կենսական նշանակության և էներգետիկ փոխկապվածության խորության մասին: Եթե համաշխարհային մակարդակում նավթամթերքի բաժինը կազմում է մոտ 20,2%, ապա ԵԱՏՄ անդամ երկրների դեպքում դա շատ ցածր է՝ կազմելով՝ 5,3%: Այսպիսի տարբերությունը բացատրվում է նրանով, որ ԵԱՏՄ անդամ երկրները հիմնականում նավթ են ներմուծում, իսկ նավթամթերքի վերամշակումը կամ ուղղվում է այլ շուկաներ, կամ տեղում է իրականացվում: Այս ամենն ընդգծում է ԵԱՏՄ ներսում վերամշակող արդյունաբերության առկայությունը, ինչպես նաև ներքին սպառումը բավարարելու հարցում դրա կարևորությունը: Համաշխարհային շուկայում բնական գազի մասնաբաժինը 1,7% է, իսկ ԵԱՏՄ շրջանակներում՝ ընդամենը 0,08%: Առկա տարբերությունը բացատրվում է նրանով, որ ռուսական գազի հիմնական սպառողները ԵԱՏՄ շրջանակներից դուրս գտնվող երկրներն են (Ասիա, ԵՄ), միաժամանակ, ԵԱՏՄ շուկայում գազի ներմուծումը սահմանափակ է:

Ռուսաստանի մասնաբաժինը պարարտանյութի համաշխարհային շուկայում մոտ 7,8% է և, համապատասխանաբար, 1,9%՝ ԵԱՏՄ շուկայում: Հետևաբար՝ պարարտանյութի արտահանման հիմնական հոսքերը շարունակում են ուղղվել միջազգային շուկաներ, որտեղ ապահովվում են մեծ ծավալի վաճառք և մրցունակ գնային պայմաններ, մինչդեռ ԵԱՏՄ անդամ երկրների պահանջարկը համեմատաբար սահմանափակ է և չունի էական ազդեցություն Ռուսաստանի արտահանման կա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՌԴ արտահանման տարեկան աճի տեմպերը ԵԱՏՄ շրջանակներում, 2015-2024 թթ. (%)[17]

[15] Հեղինակի հաշվարկներն ըստ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալների, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

[16] Հեղինակի հաշվարկներն ըստ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալների,https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

[17] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալները, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՌԴ արտահանման կառուցվածքը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ՝ ըստ ապրանքախմբերի, 2024 թ. (%)[18]

ռուցվածքի վրա: Մետաղների առումով, ԵԱՏՄ շուկան հատկապես ալյումինի դեպքում ունի ավելի մեծ կարևորություն, որը կապված է տարածաշրջանային արդյունաբերական կապերի և մետաղամշակման ոլորտի ներգրավման հետ:

Ուսումնասիրելով ագրոարդյունաբերական ապրանքները՝ պարզ է դառնում, որ ցորենի արտահանման հիմնական շուկաները դուրս են ԵԱՏՄ-ից, սակայն, միաժամանակ, նկատվում է որոշակի մասնագիտացում ԵԱՏՄ-ում այլ հացահատիկային մշակաբույսերի ներմուծման ուղղությամբ: Ամենաակնառու տարբերությունը նկատվում է մեքենաների և տրանսպորտային միջոցների ապրանքախմբերում:

Մեքենաներն ու տրանսպորտային միջոցները համաշխարհային արտահանման կառուցվածքում կազմում են մոտ 15,1%, մինչդեռ ԵԱՏՄ շրջանակներում դրանց մասնաբաժինն ավելի մեծ է՝ մոտ 36,8%: Սա վկայում է, որ Ռուսաստանի համար, որպես բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքի արտահանման առաջնային ուղղություն, հանդես է գալիս ԵԱՏՄ շուկան: Դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ տրանսպորտային միջոցների և մեքենաների արտահանումն ունի ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական նշանակություն՝ ապահովելով և՛ արդյունաբերական, և՛ տեխնոլոգիական ինտեգրման խորացում:

Այսպիսով՝ ապրանքային կառուցվածքի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ՌԴ արտահանման կառուցվածքում շարունակում է գերակշռել էներգետիկ ոլորտը, բայց, միաժամանակ, նկատվում է նաև որոշակի կառուցվածքային տարբերակում: Եթե համաշխարհային շուկայում ՌԴ արտահանումը հիմնականում գերակշռող է ըստ հումքային ապրանքախմբերի, ապա ԵԱՏՄ շուկաներում ակնառու է մեքենաների և տրանսպորտային միջոցների կշիռը: Հետևաբար՝ ԵԱՏՄ շուկան յուրահատուկ հարթակ է ՌԴ բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտահանման համար, որն էլ կարող է հիմք ստեղծել տնտեսական քաղաքականության ինտեգրացիոն համագործակցության բարելավման տեսանկյունից:

Եզրակացություն: Ռուսաստանի արտահանման շարժընթացի և ապրանքային կառուցվածքի վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտելու մի շարք օրինաչափություններ: Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ՌԴ արտահանումը ԵԱՏՄ անդամ երկրներ վերջին տասնամյակում զգալի աճ է գրանցել՝ չնայած առկա աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին:

[18] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ներկայացվող տվյալները, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

Ռուսաստանի համար արտահանման հիմնական ուղղություններ են շարունակում մնալ Բելառուսի և Ղազախստանի շուկաները՝ զբաղեցնելով ԵԱՏՄ արտահանման հիմնական մասնաբաժինը: Իսկ Ղրղզստանը փոքր շուկա է, բայց ունի կայուն աճի միտում:

Ապրանքային կառուցվածքի համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ համաշխարհային շուկայում արտահանման հիմնական մասը կազմում են հումքային ապրանքները, իսկ ԵԱՏՄ շրջանակներում մեծանում է մեքենաների և տրանսպորտային միջոցների մասնաբաժինը: Հետևաբար՝ ԵԱՏՄ շուկան առանձնահատուկ դեր ունի Ռուսաստանի արդյունաբերական արտադրանքի համար:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ԵԱՏՄ շուկան Ռուսաստանի համար ունի երկակի նշանակություն: Մի կողմից՝ դա կանխատեսելի և կայուն հարթակ է էներգետիկ մատակարարումների շարունակականության ապահովման համար, իսկ մյուս կողմից՝ ռազմավարական ուղղություն՝ տեխնոլոգիական և արդյունաբերական ապրանքների արտահանման ընդլայնման տեսանկյունից: Հետևաբար՝ ԵԱՏՄ շրջանակներում արտահանման զարգացումն ունի և տնտեսական, և աշխարհաքաղաքական նշանակություն՝ ամրապնդելով ինտեգրացիոն կապերը, ինչպես նաև ձևավորելով երկարաժամկետ համագործակցության նոր հնարավորություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտե (2015–2024): Հայաստանի արտաքին առևտրի վիճակագրություն, Երևան, https://armstat.am
2. Евразийская экономическая комиссия. (2015–2024). Внешняя торговля государств – членов ЕАЭС. Москва. https://eec.eaeunion.org
3. Федеральная служба государственной статистики РФ. (2015–2024). Внешнеэкономическая деятельность России: статистические данные. Москва. https://rosstat.gov.ru
4. Национальный статистический комитет Республики Беларусь. (2015–2024). Внешняя торговля Республики Беларусь. Минск. https://www.belstat.gov.by
5. Бюро национальной статистики Агентства по стратегическому планированию и реформам Республики Казахстан. (2015–2024). Внешняя торговля Республики Казахстан. Астана. https://stat.gov.kz
6. Национальный статистический комитет Кыргызской Республики. (2015–2024). Внешнеэкономическая деятельность Кыргызстана. Бишкек. https://stat.kg
7. Eurasian Development Bank. (2022). Eurasian Economic Integration Report 2022. Almaty: EDB. https://eabr.org
8. World Bank. (2021). Russia Economic Report: Navigating the Long Road to Recovery. Washington, DC: World Bank. https://www.worldbank.org
9. International Monetary Fund. (2022). Russian Federation: Selected Issues Paper. Washington, DC: IMF. https://www.imf.org
10. Eurasianet. (2019–2024). Economic and trade analysis on Russia and the EAEU. https://eurasianet.org
11. Global Tribune. (2024, April 25). Mineral Fertilizers Market in Russia 2023 and Prospects for 2024. https://globaltribune.net/mineral-fertilizers-market-in-russia-2023-and-prospects-for-2024
12. Statista. (2025, February 12). EU Has Continued to Buy Russian Fertilizer Throughout War. https://www.statista.com/chart/33926/fertilizer-imported-from-russia-to-the-eu/
13. Tendata. (2024). Fertilizer Production Exports from Russia in 2023. https://www.tendata.com/blogs/insight/5737.html
14. UNCTAD (United Nations Conference on Trade and Development). United States Trade Matrix. https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

Армида КЕРЯН
Магистрант второго курса образовательной программы "Международные экономические отношения", экономический факультет, АГЭУ

РЕГИОН И МИР

ЭКСПОРТ БЕЗ ГРАНИЦ: ЭКОНОМИЧЕСКИЕ ВОЗМОЖНОСТИ И ВЫЗОВЫ РОССИИ В РАМКАХ ЕАЭС

Евразийский экономический союз (ЕАЭС) выступает интеграционной платформой, предоставляющей государствам-членам возможность расширять свои экспортные рынки и обеспечивать устойчивые основы экономического роста. Российская Федерация играет ключевую роль в ЕАЭС как по масштабу своей экономики, так и по влиянию на формирование общего рынка. Цель статьи — проанализировать экспортный потенциал России в рамках ЕАЭС, выделяя как структурные преимущества, так и ограничивающие факторы. В основе исследования лежат сравнительные и статистические методы, с использованием последних официальных данных и профессиональной научной литературы.

Ключевые слова: *ЕАЭС, Российская Федерация, экспортный потенциал, экономическая интеграция, возможности, вызовы*

Armida KERYAN
Second-year student of the Master's program "International Economic Relations", Faculty of Economics, ASUE

REGION AND THE WORLD

EXPORTS WITHOUT BORDERS: RUSSIA'S ECONOMIC OPPORTUNITIES AND CHALLENGES WITHIN THE EAEU

The Eurasian Economic Union (EAEU) serves as an integration platform that enables member states to expand their export markets and establish sustainable foundations for economic growth. The Russian Federation plays a central role in the EAEU, both in terms of its economic scale and its influence on the formation of the common market. This paper aims to analyze Russia's export potential within the EAEU framework, highlighting both structural advantages and limiting factors. The study employs comparative and statistical methodologies, incorporating recent official data and relevant scholarly literature.

Keywords: *EAEU, Russian Federation, export potential, economic integration, opportunities, challenges*